

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2013 թ.

N 679-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԷՅ ԹԻ ԷՅ ՎԱՆՔ ԼԵՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՐԾԱՓԱՅՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի
N 245-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ «Էյ Թի Էյ Վանք Լես» փակ բաժնետիրական ընկերությանը ինքնամթերման եղանակով անհատույց հատկացնել 100 (հարյուր) խտացված խորանարդ մետր կաղնու գործափայտ:

2. Սույն որոշման 1-ին կետով հատկացված գործափայտի մասով «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ազատել բնօգտագործման վճարի վճարումից:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 14-ի «Էյ Թի Էյ Վանք Լես» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց գործափայտ հատկացնելու մասին» N 245-Ա որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ